# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 05.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 10:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Դիջիփրոփերթի» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևանի Իսակովի պողոտա 13/12 և Նորագյուղ 66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նա նշեց, որ շենքն արդեն կառուցված է և անցել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և ստացել պետական փորձաքննական դրական եզրակացություն և այժմ փորձաքննության է ներկայացվել նախագծի փոփոխությունները: Նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները:

Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի բնապահպանական մասի պատասխանատու Արթուր Մինասյանը մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության ընթացքում բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի հետ կապված: Նա նշեց, որ բոլոր ազդեցությունների համար մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Այնուհետև նախագծի ճարտարապետ Գրիգոր Պողոսյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Հանրային լսմանը ներկա էին նաև Երևանի ավագանու անդամներ Աննա Ավետիսյանը և Արմեն Քոչարյանը: Վերջիններս հարց բարձրացրեցին կառուցվող շենքում ապաստարանների առկայության վերաբերյալ, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ այս փուլում և տվյալ շենքում ապաստարան նախատեսված չէ: Նրանք նշեցին, որ շենքն արդեն կառուցված է և փորձաքննության է ներկայացվել շենքի կառուցման նախագծային փոփոխությունները: Ավագանու անդամները նշեցին, որ շատ կարևոր է ապաստարանների առկայությունը, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ մյուս մասնաշենքում, որը կառուցվելու է հետագայում, նախատեսվել է ապաստարան՝ հագեցած առաջին անհրաժեշտության ենթակառուցվածքներով: Նրանք նշեցին նաև, որ նախագիծը անցել է մի շարք փորձաքննություններ և առկա են համապատասխան թույլտվություններ:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Էլլադա Արամյանը հարցրեց կանաչապատման մակերեսի և քաղաքապետարանի հետ կանաչապատման նախագծի համաձայնեցման վերաբերյալ, ինչին նախաձեռնողի ներկայացուցիչները պատասխանեցին, որ կանաչապատման մի մասն արդեն իրականացվել է ծրագրի շրջանակում, իսկ փոփոխված նախագիծն արդեն ներկայացվել է համաձայնեցման: Քննարկման ավարտին Արամյանը նշեց, որ դիտողություններ չունի:

Հարությունյանը ամփոփելով հանրային լսումը՝ շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Կենտրոն համայնքի ներկայացուցիչներ, Երևանի քաղաքապետարանի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Դիջիփրոփերթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Լ-ա Ա. Ֆարմանյան**